ՀՈՒՇԱԳԻՐ
(Մտադրությունների մասին համաձայնություն)

ՀՀ, Երեւան 10.09.2020թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամը (պետական գրանցման համար՝ 222.160.699243, գտնվելու վայրը՝ ՀՀ, Երեւան, Տերյան փողոց, թիվ 74, (այսուհետ՝ Հիմնադրամ-1), ի դեմս՝ ռեկտոր Վարդան Էդիկի Ուռուտյանի, որը գործում է Հիմնադրամ 1-ի կանոնադրության հիման վրա, մի կողմից, եւ «ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամը (պետական գրանցման համար 443.160.12377 գտնվելու վայրը՝ Արցախի Հանրապետություն, ք. Շուշի, Աշոտ Բեկորի 4 (այսուհետ՝ Հիմնադրամ-2), ի դեմս ռեկտոր Հովհաննես Վաչեի Թոքմաջյանի, որը գործում է Հիմնադրամ 2-ի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ երկուսը միասին՝ Կողմեր), կնքեցին Մտադրությունների մասին սույն համաձայնությունը (այսուհետ նաեւ՝ Հուշագիր)՝ հետեւյալի մասին.

1. Սույն հուշագրով համագործակցության շրջանակներում Կողմերը պայմանավորվում են մեկտեղել իրենց ջանքերը, միջոցներն ու փորձը եւ գործակցել հետեւյալ ուղղություններով.
1.1. պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստումների ծրագրերի իրականացում և հավաստագրում,
1.2. համատեղ վերապատրաստման կարճաժամկետ ծրագրերի իրականացում և մասնակիցների հավաստագրում,
1.3. համատեղ փոխանակման ծրագրերի իրականացում և մասնակիցների հավաստագրում,
1.4. դասընթացավարների վերապատրաստում (TOT),
1.5. փորձի փոխանակում պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և վարչական անձնակազմի հետ,
1.6. երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական բնույթի ծրագրերի, այդ թվում՝ համապատասխան ոլորտներում փորձաքննությունների իրականացում, մասնագիտական գրականության, մեթոդական ուղեցույցների, աշխատությունների, պարբերականների եւ այլ նյութերի փոխանակման, համատեղ աշխատանքային խմբերի ձեւավորման եւ Կողմերի լիազորված աշխատակիցների միջոցով փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկում եւ լուծում,
1.7. գիտական կոնֆերանսների, սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպում, դրամաշնորհային ծրագրերի համատեղ իրականացում,
1.8. փոխադարձ հետաքրքրության շրջանակներում համաձայնեցված գիտական հետազոտությունների, խորհրդատվությունների իրականացում,
1.9. անտառների վերականգնման, ինչպես նաև էկոհամակարգում ծագած այլ խնդիրների լուծման ծրագրերի համատեղ մշակում և իրականացում,
1.10. սույն հուշագրի գործողության շրջանակներում Կողմերի գործառույթների կատարման համար, ըստ աշխատանքային անհրաժեշտության, համապատասխան սարքավորումների, լաբորատոր եւ այլ միջոցների օգտագործում,
1.11. համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվության հայցում եւ տվյալների ստացում,
1.12. ուսանողների ուսումնական, արտադրական, նախաավարտական եւ գիտաարտադրական պրակտիկաների անցկացում:
2. Հուշագրի դրույթներից բխող աշխատանքների բնույթի, ծավալի եւ այլ անհրաժեշտ

գործողությունների հստակեցումը Կողմերը կկատարեն Հուշագրի շրջանակում առանձին փաստաթղթեր կազմելու եւ հաստատելու միջոցով:

3. Կողմերը պայմանավորվում են սույնում նշված նպատակներին հասնելու համար գործադրել իրենց լավագույն ջանքերը, մասնավորապես, սակայն չսահմանափակվելով անհրաժեշտության դեպքում տեղեկատվության, գիտելիքի, փորձի, հմտությունների փոխանակմամբ, մասնագիտական հանձնախմբերի ստեղծմամբ, այլ անձանց եւ մարմինների հետ համագործակցությամբ:
4. Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից եւ գործում է անորոշ ժամկետով:
5. Հուշագրում փոփոխություններ եւ լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ եւ համարվում են դրա անբաժանելի մասը:
6. Հուշագիրը կարող է լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ, քան 1 (մեկ) ամիս առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցմամբ:
7. Կողմերի միջև նախկինում կնքված համագործակցության պայմանագրերն ու հուշագրերը, սույն Հուշագիրը ստորագրելու պահից համարվում են ուժը կորցրած:
8. Հուշագիրը կնքվում է երկու հավասարազոր հայերեն օրինակից, յուրաքանչյուր Կողմին՝ մեկ օրինակ:

Կողմերի ստորագրությունները

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» Հիմնադրամ	«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» Հիմնադրամ
+37412545713	+374 97 299294
Ռեկտոր Վարդան Ուրուտյան	Ռեկտոր Հովհաննես Թոքմաջյան
ստորագրություն, կնիք	ստորագրություն, կնիք
	10.09.2020թ.